

## 25 Օգոստոս

Երկու ամսուան համար դադարուած *Նէօլօղոս* լրագրոյն ի նպաստ՝ մայրաքաղաքիս յոյներն երկու ատուր մէջ հազար ոսկի հանգանակեցին. այս հանգանակութիւնն աւելի պիտի գիրնայ՝ երբ ուրիշ քաղաքներու յոյներն ալ դրկեն իրենց նուէրները:

Եթէ մեր Թուրքիոյ խմբագիրները գիտնան, որ իրենց համար այսպիսի հանգանակութիւն մը պիտի ընեն՝ շաքաթը անգամ մը կը գոցուին, եւ կամ մէյ մ'ալ բնաւ չհրատարակուելու համար կ'իսափանուին:

Այս քաջալերութիւնը չկայ մեր ազգին մէջ, որ խմբագիրներն ալ քիչ մը տարբեր եղանակաւ խմբագրեն իրենց թերթերը:

## 26 Օգոստոս

Դարձեալ նախարարական փոփոխութեան գրոյցներ կգրուին լրագիրներու մէջ:

Մինչեւ որ մեր գլուխները չփոխուին՝ նախարարական փոփոխութիւնները չպիտի վերջանան:

Եւ որովհետեւ անկարելի է մեզ մեր գլուխները փոխել՝ պիտի ստիպուինք օր մը մեր գլխարկները փոխել: Այս է հիմակուան ընթացքը. գլուխը չփոխողին՝ գլխարկը կ'փոխեն, եթէ չես հաւատար՝ Պուլղարիա գնա եւ տե՛ս:

## 27 Օգոստոս

Մայրաքաղաքիս մէջ արծաթ *մէճիտիյէին* կեղծը կշինեն եղեր քանի մը ընկերներ:

Այս խեղճերը ձերբակալուեցան այս օրերս, մինչդեռ պատուանշան տրուելու էր իրենց, վասն զի արծաթ մէճիտիէ չմնաց հրապարակի վրայ. հասարակութիւնը ի՞նչ դրամ գործածէ:

## 28 Օգոստոս

Հեռագիրն այսօր բերաւ մեզ համառօտութիւն ճառին, զոր Անգղիոյ թագուհին խօսած է խորհրդարանական նիստերուն շրջանին փակման առթիւ:

Այս ճառին մէջ թագուհին յիշելով, թէ Հայաստանի յատուկ բարենորոգումներուն համար տէրութիւններն իրենց դիտաւորութիւններն հաղորդած են Բ. Դրան, կյուսայ որ առաջադրուած նպատակին պիտի հասնին: